

# Անուշ Ազիզյան

## Քիմիայի և կենսաբանության լաբորանտի աշխատանքային պլան 2023-2024 ուստարի

«ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՆՏ»ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Հ/Հ	Անվանումը	Նկարագիրը
1.	Պաշտոնի անվանումը	Լաբորատորիայի լաբորանտ
	Դերը	Լաբորատորիայի լաբորանտը լուծում է քիմիայի, կենսաբանության բնագավառների հետազոտությունների, ինչպես նաև այլ ոլորտների հետազոտությունների արդյունքների գործնական կիրառմանն առնչվող տեխնիկական խնդիրներ:
<b>Խնդիրների բնագավառը և աշխատանքային գործընթացները</b>		
1.	Բնագավառ 1.	Կազմակերպական աշխատանքներ
	Աշխատանքային գործառույթները	<ul style="list-style-type: none"> <li>-Լաբորատորիայի լաբորանտը նախապատրաստում և ապահովում է առարկայական ծրագրով նախատեսված լաբորատոր աշխատանքները,</li> <li>-նախապատրաստում, հավաքում, մշակում և կուտակում է ելակետային տվյալներ, նմուշներ, տիպօրինակներ և նյութեր՝ հետազոտությունների, փորձերի և վերլուծությունների համար,</li> <li>-նախապատրաստում, ստուգում և կարգաբերում է լաբորատոր սարքավորումները, ապարատները՝ փորձերի անցկացման համար,</li> <li>-մասնակցում է հետազոտություններ և փորձեր կատարելուն, դրանց արդյունքները վերլուծելուն և մշակելուն, դիտարկումներ, գրանցում սարքերի ցուցանիշները, վարում աշխատանքային մատյանները,</li> <li>-որոշում է նախագծերի իրացման համար անհրաժեշտ նյութական և աշխատանքային ծախսերի ծավալները,</li> <li>-կիրառում է հետազոտությունների և փորձերի ընթացքում ծագող խնդիրները լուծելու համար տեխնիկական գիտելիքներ,</li> <li>-կազմակերպում է սարքավորումների սպասարկում և նորոգում,</li> <li>-ապահովում է աշխատակիցներին՝ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումներով, նյութերով, և այլն,</li> <li>-լաբորատոր փորձերից առաջ սովորողներին պարզաբանում է տվյալ աշխատանքի անվտանգության կանոնները և դասավանդող ուսուցչի հետ համատեղ ապահովում դրանց կատարումը,</li> <li>-իրականացնում է կապ գրադարանի հետ՝ անհրաժեշտության դեպքում դպրոցի լաբորատորիան ուսումնամեթոդական գրականությամբ ապահովելու նպատակով,</li> <li>-մասնակցում է դպրոցի լաբորատորիայի ցուցափեղկերի ու վահանակների ձևավորման աշխատանքներին,</li> </ul>

		<p>-ուղղորդում է աշակերտներին նախապատրաստվել լաբորատոր աշխատանքներին, ծանոթանալ աշխատանքի մեթոդական ցուցումներին,</p> <p>-լաբորատոր փորձերից հետո վերահսկում և ապահովում է չօգտագործված նյութերի, գործիքների և սարքավորումների պահեստավորումը, անձամբ իրականացնում թափոնների անվտանգ վնասագերծումը, ոչնչացումը,</p> <p>- ուսումնական պարապմունքների ժամանակ աշակերտներին օգնում և ապահովում է ցուցադրական-ուսուցողական նյութերով, սարքավորումներով:</p>
2.	Բնագավառ 2.	Փաստաթղթային աշխատանքների կազմակերպում
	Աշխատանքային գործառույթները	-Վարում է դպրոցի լաբորատորիայում տարվող գործավարությունը և կրում պատասխանատվություն դպրոցի լաբորատորիայի գործունեությանը վերաբերող փաստաթղթերի պահպանության համար:
3.	Բնագավառ 3.	Իրավունքներ և պարտականություններ
	Աշխատանքային գործառույթները	Պարտավոր չէ կատարել ղեկավարության՝ օրենսդրությանը հակասող հրամանները, հանձնարարությունները, և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության: Լաբորատորիայի լաբորանտն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ և պատասխանատվություն:
4.	Բնագավառ 4.	Հաշվետվողականություն
	Աշխատանքային գործառույթները	Սահմանված կարգով իր անմիջական ղեկավարին է ներկայացնում հաշվետվություն՝ իր կատարած աշխատանքների մասին:
<b>Պատասխանատվությունը և բարդության աստիճանը</b>		

1.	Պատասխանատվությունը	<p>Պատասխանատվություն է կրում համակարգման իր ոլորտում իրականացվող աշխատանքների իրականացման և հսկման համար: Այդ աշխատանքների կազմակերպման ժամանակ գործում է ինքնուրույնաբար՝ առաջնորդվելով գործող իրավական ակտերով և կարգերով, ինչպես նաև անմիջական ղեկավարի հանձնարարականներով:</p> <p>Պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ վերազանցելու, ինչպես նաև իրեն առաջադրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:</p> <p>Պատասխանատվություն է կրում իր գործունեության ընթացքում կատարած իրավախախտումների և /կամ/ պատճառած նյութական վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության վարչական, աշխատանքային, քրեական և քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>
----	---------------------	--

2.	Բարոյության աստիճանը	Կատարում է միջին բարոյության աշխատանք:
6.	Աշխատանքային գիտելիքներ և կարողություններ	
6.1.	Գիտելիքները	<p>Լաբորատորիայի լաբորանտը պետք է իմանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>-իր կողմից համակարգվող աշխատանքների կազմակերպման և իրականացման ձևերն ու սկզբունքները,</li> <li>-ուղորտի նորմատիվ իրավական հենքը (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Համալսարանի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների, կոլեկտիվ պայմանագրի, աշխատատեղում հակահրդեհային անվտանգության պահպանման, էլեկտրաէներգիայի, ջերմային էներգիայի խնայողաբար օգտագործելու և սահմանված նորմերը պահպանելու հրահանգի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն),</li> <li>-ներկայացվող հաշվետվությունների տեսակները, դրանց կազմման ընդհանուր սկզբունքները:</li> </ul>
6.2.	Կարողությունները	<p>Լաբորատորիայի լաբորանտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>-գնահատել և վերլուծել դպրոցում իր կողմից համակարգվող աշխատանքների ընթացքը և արդյունքները, կատարել աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկներ,</li> <li>-կազմել իր կողմից համակարգվող աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ:</li> </ul>
7.	Լրացուցիչ գիտելիքներ և կարողություններ	
7.1.	Լրացուցիչ գիտելիքներ	<p>Լաբորատորիայի լաբորանտը պետք է իմանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>-միջանձնային հարաբերությունների ձևավորման սկզբունքները,</li> <li>-բանակցությունների վարման ընդհանուր կանոնները,</li> <li>-աշխատողների մոտիվացիայի (շահադրդման) բացահայտման, վերահսկման և կառավարման մեթոդները,</li> <li>-աշխատողների էթիկայի (բարեվարքության) կանոնները:</li> </ul>
7.2.	Լրացուցիչ կարողություններ	<p>Լաբորատորիայի լաբորանտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>-կիրառել բանակցությունների վարման մեթոդները,</li> <li>-ինքնուրույն պլանավորել և կազմակերպել աշխատանքները:</li> </ul>

N	Աշխատանքային բովանդակություն	Ժամկետը	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
---	------------------------------	---------	-------------	-------------------------

1.	Նախապատրաստել և ապահովել առարկայական ծրագրով նախատեսված լաբորատոր աշխատանքներ՝ քիմիայից և կենսաբանությունից:	սեպտեմբեր	<<բնագիտական>> մ/մ	
2.	Հաշվել լաբորատորիայի նյութերը և սարքավորումները	Ուս. տարվա ընթացքում		
3.	Ապահովել չօգտագործված նյութերի և սարքավորումների պահեստավորումը	Ուս. տարվա ընթացքում		
4.	Լաբորատոր փորձերից առաջ սովորողներին պարզաբանել տվյալ լաբորատոր աշխատանքի անվտանգության կանոնները և ապահովել դրանց կատարումը	Ուս. տարվա ընթացքում		
5.	Սովորեցնել աշակերտներին աշխատել ժամանակակից սարքավորումներով	Ուս.տարվա ընթացքում	<<բնագիտական>> մ/մ	
6.	Զարգացնել աշակերտների հետաքրքրությունը դեպի քիմիա, կենսաբանություն և առարկաները	Ուս. տարվա ընթացքում		
7.	Ստեղծել լիարժեք պայմաններ ուսուցիչների և աշակերտների համար լաբորատոր աշխատանքների իրականացման գործում	Ուս. տարվա ընթացքում		
8.	Օգտվելով <a href="http://esource.armedu.am/">http://esource.armedu.am /</a>	Ուս. տարվա ընթացքում	Բնագիտական առարկաներ	

	կայք էջի լաբորատոր և գործնական աշխատանքներից:		օպերատոր ուսուցիչներ	
9.	Մովորեցնել աշակերտներին օգտվել աղյուսակներից և սխեմաներից	Ուս. տարվա ընթացքում	<<բնագիտական>>	
10.	Կենսաբանության լաբորատոր աշխատանքներին նախօրոք նախապատրաստվել դպրոցում առկա նյութերով և սարքավորումներով կատարել փորձեր ըստ տվյալ ուսումնական դասին համապատասխան	Ուս. տարվա ընթացքում		
11.	Քիմիայի լաբորատոր աշխատանքներին նախօրոք նախապատրաստվել դպրոցում առկա սարքավորումներով կատարել փորձեր ըստ տվյալ ուսումնական դասին համապատասխան	Ուս. տարվա ընթացքում		

